

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3786



1921

010

PL2001

С 1926 от № 20

№ 24

(319)

# Армянский Букварь

Для детей и взрослых

# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅՐԵՒՄՈՒՆ

ՓՐՔՐԵՐԻ Ի ՄԵՄԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИСТОРИОГЕДИИ  
АКАДЕМИИ НАУК  
СССР

Государственное издательство  
Куб.-Черн. Обл. отделение



91.99-8  
2-25

Գեղական Հրատարակութիւն  
Կոմ.-Հեռ. ման. բաժնեմունիք

С1926сн320

№ 24  
Л  
12 1286  
491.99-8  
2-25

# Армянский Букварь

Для детей и взрослых

# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱԿ

ՓԼՔՐԵՐԻ ԵՒ ՄԵԾԵՐԻ ՀԱՇԽ



Государственное издательство  
Куб.-Черн. Обл. отделение

Պետական Հրատարակչութիւն  
Կուբ.-Չեռն. մակ. քաջանակութիւն

*Ուա*

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

*Սար Պար**Սար**Պար**սաս**սաշ**պար**սպաշ**սար**պար**սրաշ**սրա**պար*

1921 թ. 30 Մարտի  
ԳՐԱՎՈՐԱԿԱՐ

50023-սահ

35304- 66

ԱՌ ԱՆ



Կ Կ



Կ

ՈՒ ՈՒ

Կատու



Ա



Մ

Սուր

Մուկ

Կար Կար Կամ Կարաս Կապար Կատար  
տուր սուր ուրուր պուրակ  
սա մաս մամ ամուր աստամ


Տ Ա



Ա

Տուն

Յ



Լուսին

Նամակ մատանի պատանի  
Լուսին լու լուր ուլ ուլիկ

Եր կիբ կիրակի ապակի պապի տատի կապիկ ստրուկ

Պապի, տուր մի նամակ

Արամ տար մի մատանի

Մի մատիտ տուր, Արամին պիտի տամ

Միրուն Լուսին

Հ Ը

Պըկու

Հ Ը

Արամ, իմ մատիտը տուր ընկերիս.

Լուսին, սիրուն Լուսին, տար

Իմ նամակը տուր Արամին

Ընկեր, ընտիր, նըման, ընկաւ, մըկնիկ, պըստիկ,

Ո ո

Կոտ

Կոպիտ

Տոտիկ

Կոտիկ

Կոմմունա

Կոմմունիստ

Ե Ե

Երկու

Երկար

Ելարան

Եկաւ

Ես ման եկա

Մանաս, արի մեր տուն

Մանամ, արի մի մատիտ տամ

Ես կոմմունիստ եմ

Տէր, սէր, մէր,

Ուր է իմ նամակը.

Արամ, եկ տուր իմ ուլիկը.

Ուր էիր երէկ իրիկուն.

Տանն էի, զիրակի էր.

Մէկ, մէկ էլ կանի երկու

Սիրում էի ընկեր Արամին

Նա սիրուն էր ու բարի

Տիրանը եկաւ տուն. մուկը մտաւ Տիրանի նստարանի  
տակ. Կատուն մտաւ տուն ու մուկը տարաւ. մուկըս, մուկըս,  
տուր իմ պըստիկ մուկըս. ասում էր Տիրանը ու լալիս էր:



Ճուն, նուշ

9



4 4

Գանգ

4 2 թ դ

Շուն Նուշ էշ Գոմէշ Պուպուշ Շամաս Անւշ  
զանգ զարի գալուստ գարուն, գալուստ, գարուն  
բգէզ եղ մողէզ Զաւէն զարմանալի  
գունտ Երկրագունտ

Բորիկ բամբակ, բանւոր բերան բարի բանալի բորոտ  
բոսոր բոկոտն բանակ կարմիր բանակ

ՆԱԽ նաւ

նաւ նաւակ կաւ սակաւ  
բան—բանել—բանւոր.

Բանւոր Գասպարը եկաւ տուն: Նա տեսաւ ընկեր Գալուստին  
ու ասաւ նրան «Ես գործարանում լաւ բանեցի»:

Պատգամ—պատգամաւոր, մանդատ—մանդատաւ որ.

2



թ թ

Բղէզ

Մեր գոմէշը եկաւ գոմ: Երկրագունդը շատ մեծ է: Սիրուն  
գարուն, արի մեր տուն: Բգէզները բըզբըզում են: Զաւէնը  
շատ զարմանալի աշակերտ է: Նուշ ես, անուշ ես, պուպուշ ես:

Մեր նաւակը եկաւ: Ես տեսայ իմ շատ սիրելի ընկեր

Սուրէնին, որը նստել էր նաւակում ու երգում էր:

Անուշ բարեկամ, սիրուն բարեկամ, ուր ես շտապում. ես էլ  
եմ գալիս: Բարի գալուստ ընկեր Գալուստին:

Սիրուն գարուն, կարմիր գարուն  
ձուտ արի, մեղ բեր նոր օրեր սիրուն



Ճանճ

Ճանճ, ճենճ, ճիճու, ճրագ, ճահիճ, ճիրան,  
ճշմարիտ  
ճանճի ճենճը, ճիճուի ճուտը.



Խըճիթ

խ

դ

դ



Աղուէս

դ

Խըճիթ, խող, խոտ, խոտաճարակ, Խորէն, խուլ, խաւար  
Թաթ, թութ, թաս, թաս, թոռ, թան.

Դինու թաս

Թան—Յանապուր. Թամար

Աղուէս, մաղ, ղաղիր, ասեղ, Ղարաբաղ

Մանիր, մանիր, իմ ճախարակ:

Ես ուզում եմ աշխատել.

Թաղէսս, արի մտիր մեր խըճիթը, բեր մեր ուրագը.

Ես պէտք է գնամ աշխատելու:

Գարնանը շատ խոտ է բուսնում դաշտերում:

Խորէն, զու խուլ ես: Մեր տանը խաւառ է. Լուսին, զուրս

արի ամպի տակէն: Տատիկ, ես գնում եմ խանութ:

Խմոր, թթուխմոր

Եղրայր, տուր էդ ասեղները տանհմ տամ տատիկիս, կար անի:

Նա կարկատում է իմ գուլպաները: Ընկեր Խորէնը մեր տանը

դարիր է: Ղարաբաղէն եկաւ մեզ լաւ լուր:

Խ Ճ Թ Ղ



Սղոց



Աղլոր

Սղոց, ցորեն, ցուցակ, ցաքան, քարտէզ, քաղաք, թանաք, աղլոր :  
Ցոլակ, Սղոցը բեր, գնամ ցախ ողոցեմ: Սուրէն, ուսումնարանի  
ցուցակները տար տուր. հւր են մեր ընկերները: Ես գրում եմ  
ճերմակ թղթի վրայ սև թանաքով: Իմ թանսքամանը շատ մեծ  
է: Դու ուզնում ես կարմիր թանաք, արի, ես քեզ կը տամ:  
Քարտէզը կախւած է պատից: Քարտէզի վրայ մենք տեսնում  
ենք գետեր և սարեր: Ես պիտի գնամ մի ուրիշ քաղաք: Ցորեն  
ու գարին—ամենայն բարին: Թանաքով գրի, մատիտով նկար:

Դ Ր Օ Շ

Դրօշ—դրօշակ. կարմիր դրօշակ  
Օր, օրօր, կէսօր, արօտ, կարօտ, մօր.



Ծառ



Այծ

Կ Պ Օ Ք Ա Յ Ճ Ռ  
Ծառ, ծուռ, ծիծառ. այծ, ծայր, մայր, Զարմայր.

ԳՈՐԾԱՐԱՆ

Եղբօրս գործարանը մեր տնից շատ մօտ է.

Ալսօր եղբայրս մեզ տարաւ գործարանը ցոյց տալու.

Արևեղ շատ լաւ էր: Բոլորն էլ աշխատում էին: Ես ուզում եմ  
ամեն օր գնալ գործարան: Եղբայրս այնտեղ կանգնած է մե-  
քենայի մօռ և գիրք է տպում: Շատ արագ կերպով ճերմակ  
թղթերը մտնում էին մեքենայի տակ և այնտեղից տպւած  
դուրս գտիս: Երեկոները եղբայրս շուտ է տուն գալիս:

**Ծաւոր ծաղկեց, Ծիծառը երգեց**

Գարունը եկաւ, կարօտս առայ

Առաւոտեան շուտ արթնացայ

Ծառ ու ծաղիկ սիրուն տեսայ

Խորհրդային Թուսաստան.

Աշխատանքի բանակ

Կուսակցական կոմիտետ—Կուսկոմ

### ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ

Բանւորների միջազգային միութիւնը կոչում է Ինտերնա-  
ցիոնալ:

### ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ

Պրոլետարներ բոլոր երկիրների, միացէք:



Զի

Զի, ձու, ձագ, ձաւար, ձուկ, ձմերուկ, խնձոր.

Զ ջ

Զ շ

Զաղաց

Զամիչ

Զաղաց, Չուր, Չրկիր, Չորի, կամուրջ, ջան.

Զամիչ, չիր, չար, կաչաղակ, չեչոտ, չեչաքար, չաղ.

Առուն եկաւ, Չուր բերեց

Զաղացի բարը դարձրեց

Չուրը ելաւ, բարձրացաւ

Մեծ կամուրջը տապալեց:

«Եղբայր արձագանք»— մուրճն ասաց մի օր.

«Քո ձայնն ինչու է իմից զօրաւոր»:

Մեղուն տըզտըզաց. տըզտըզացին ձագերը. արջը չքաշեց իր  
բրդոտ թաթերը. ողջ բունը բանդեց, ձագերը ջարդեց, խարիսխը  
հանեց, ծամեց ծամծմեց:

Քաշիր, եզը, ուսիդ մասադ,

միպահին արա, քշիր, հօտադ

Աղուէսի դունչը խազողին չհասաւ, ասաց. «Խակ է»:  
Այ կացին, ինչ քաջ ես: Թէ որ քաջ եմ, ինչու է դարբինն  
ինձ ծեծում:

Ցորեն զարի գերանդիով քաղեցին, խուրձ կապեցին բարդ  
բարդեցին դաշտումը:

Սյօր առաւօտեան մենք ընկերներսկ ձի նստանք ու դուրս  
հկանք զրօսանքի: Ինչքան խելօք կենդանի է ձին: Սիրում ես  
ես նրա աշքերը: Ձին զօրեղ բեռնակիր է. նա օգնում է  
գիւղացուն երկրագործութեան մէջ:

Մայրիկ ինչու չես քնում: Սպասում եմ մեծ եղբօրդ, զաւակս:  
Նա որտեղից պիտի գայ, մայրիկ. աշխատանքից, որդիս:



Ծով

Սով, վառ, վառել, վառարան  
Հազարը վառեց մեր տան ճրագը  
Գարնանը գետերը վարարում են.  
Այ իմ Արագ, ջուրդ վարար  
Սիրուն եարիս եարար տեսամ.

Պարտէղում վարդ է բացուել, կըսպասէ սոխակին:  
Վարել, թիավարել, կառավարել, ձիավարել:  
Գիւղացին գութանով վարում է երկիթը:

Վառարանի մօտ նստած դու մտածում ես. երբ պէտք է  
գայ գարունը, սիրուն ու տաք գարունը: Ինչքան ուզում եմ,  
որ ձմեռը շուտ անցնի:

Ճերմակ ձիւնը պատել է երկիթը. քամին վըզզում է ու  
մարդու թոքերի մէջ մտնում: Յուրա է, ցուրտ է, գնանք վա-  
ռարանի մօտ տաքանանք:

Ընկերութեան մէջ խարդախութիւնից վատ բան շկայ:

Ոյ—լոյս

Յ—յարմար

Լոյս, յոյս, բոյս, անտարակոյս, ծխնելոյս, յիյն, բոյն, թոյն:  
—Յատուկ, յիմար, յարմար, յետոյ, յիշատակ:

Անտարակոյս, ընկեր, դու քո աշխատանքը արդէն վերջաց-  
րել ես, դրա համար ես տուն գնում: Բոյսերը շատ օդուա-  
կար են մարդկանց: —Թունաւոր սիրուր թունաւոր սրից աւե-  
լի վատ է:

բապմունքները վերջանում են: «Վարդան, ժամացոյց ունես»:  
«Եյս, իմ ժամացոյցը ժամագործի մօտ է»: Ժամացոյցը ցոյց  
է տալիս օրւայ ժամերը: Երբ կը լինի մեր վերջը, ոչ ոք  
չգիտէ ժամն ու ժամանակը:

Ընկեր Կարապետ, դու ստացա՞ր քո բաժինը: Գնա, հել թի  
կանգնիր, որ հաց ստանաս: Ամեն մարդ պիտի աշխատի, որ  
իրաւունք ունենայ հաց ուտելու: Զաշխատողը չի ուտի: Հեր-  
թըդ ինձ կըտամս, Բարսեղ: Ո՛չ, ես վազուց կանգնած եմ ու  
յոգնել եմ. բացի դրանից ժամանակ շունիմ: Ինքդ քեզ համար  
նոր հերթ ճարիր»:

Կարմիր բանակը յաղթում է իւր բոլոր թշնամիներին: Նա  
յաղթական առաջ է շարժւում: Մեզ այժմ ոչ ոք չի հրամա-  
յում. այժմ մենք ենք մեր տէրը;

**Լենինն աւ Տրոցկին յաւիտեան կը մնան պատմութեան մէջ**

**Մենք մի նոր կեանքի ուղին ենք հարթում.**

**Դժւար, տատասկոտ քարոտ մի ուղի.**

**Էյ, բանւոր եղբայր, արթուն կաց, արթուն  
Վտանգը մեծ է, մարտը կատաղի:**

**Անցորդը կանգնեց դարբնոցի դիմաց, դարձաւ զարմանքով**

Թոյն—Թունաւոր  
Բոյս—բուսական  
Յոյն—Յունաստան



Ժամ, ժամանակ, ժամւոր, ժամագործ, բաժին, բուրժուա,  
պրոլետար:

Հ

Հաւ

Հաւ, հաւան, հազար, համար, համրանք, հիւանդ, հինգ, հա-  
շիւ,

Լեհ—Լեհաստան


Յոյն—Յունաստան

Հայ—Հայաստան

Խորհրդային—Հայաստան

Ընկերներս հիմա կըգան դպրոցից: Ժամը երկուսին պա-

երկաթին ասաց. Ինչքան սիրուն ես, դու փայլուն երկաթ, աշխատանքի մէջ, դաշտ ու լեռները հերկում ես անդուր, գործարաններին նոր կեանք պարզեցում ու հիացմունքով մեր սիրտը լցնում։ Ճողա, շողշողա, դու անդուր երկաթ, տուր մեզ բախտաւոր մի նոր ապագայ։



*Փուքու*

Փակ, փակել, փականք,  
Փոր, փորել, փորփորել.  
Փոս, փող, փիլիսոփայ,  
Փետուր—անփետուր


Ուրիշին փոս փորողը ինքը մէջը կընկնի։

Արտաշէս, գիտես Հայկը երկաթագործի մօտ է աշխատում. առաւօտից մինչև երկոյ հնոցի մօտ կանգնած փուքսն է փշում։ Ոչ փողոց գուրս գալիս, ոչ էլ տուն է գնում։ Լայն փափախը գլխին, փշում է հա փշում։ Մեծ փափադ ունի իւր աշխա-

տանքը փոխելու, բայց վարպետը թոյլ չի տալիս։

Փուշն արդէն յոյսը հատած  
Ճանկ ու ատամ սուր պատրաստած,  
Կողքովն ով որ անց է կենում  
Քաշում է փեշն ու հարցնում  
Թէ չե՞ն տեսել մէկն ու մէկին  
Էն լիրը ճային կամ չղջիկին։

35304-6-6



Օֆ, էֆ, ուֆ, ֆունտ, ֆէս, ֆալ, ֆլուրդոն, ֆայթոն,  
ֆուֆայկա

ֆուրդունով ապրանք են տեղափոխում  
ֆայտոնով մարդիկ են ման գալիս;



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Զորս եղբայր են. շորսն էլ ջոկ ջոկ ունեն հասակ.  
Գարգևներն են հազար տեսակ  
Փոքր եղբայրն է պատանի, բողբոջ տերև սաղարթ ունի.  
Երկրորդ եղբայրն երիտասարդ  
Տալիս է մեզ անձրև առատ.  
Երրորդ եղբայրն է չափահաս  
Մրգեցով լի ունի մի թաս.  
Չորրորդ եղբայրն է ծերունի  
Ցուրտ ու խաւար շալկած ունի.

Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ.  
Գարուն, ամառ, աշուն, ձմեռ:  
Ռուսաստանը ֆետերատիւ հանրապետութիւն է:  
Ֆարուիկային հայերէն ասում են գործարան  
Ֆլագը հայերէն նշանակում է դրօշակ.  
Բանւորների եւ գիւղացիների տեսակէտը կոմմունիստական է:  
Կարլ Մարքսը եւ Փրեդրիխ Էնգելսը հիմք դրին գիտական սոցիալիզմին

ԻԻՂ—ԻՒՂ  
ԻՒՂ, գիւղ, արիւն,

Ազատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն, ընտրութիւն  
Խորհուրդների ընտրութիւն, խորհրդային իրաւակարգ  
Խորհրդային հասարակակարգ  
Կուսակցութիւն—կուսակցական:

Ուսումը լոյս է: Տգիտութիւնը անյոյս խաւար է.  
Աթէնքը յոյների մայրաքաղաքն է: Ծիծեռնակը իւր սոյնը շիւնում է բարձր տեղերում: Անտարակոյս, այսօր մեզ մօտ կը հաւաքւեն ընկերները: Այս մարդ, ինչու ես յոյսդ կորցրել: Մեր վառարանի ծխնելոյզի բերանը մեծ է:

Դիւ որ գիւղից ես, Արշակ: Յրտից արիւնս երակներիս մէջ սառել է: Ազատութիւն ձեռք բերելու համար պիտի դեռ շատ արիւն թափւի: Լնկեր, մի խնայիր քո կարմիր արիւնը մարդկութեան բախտաւոր ապագայի համար:

Սոցիալիզմի թագաւորութիւնը իւր հետ բերում է իսկական ազատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն:

Գիւղացին իւր պարտէզից շահ շունեցաւ այն տարին. գիւտէք ինչու, բարի էշը չիմանալով գործի լաւն ու գէշը, թըռչունների ետևից վազվակելով անդադար, կոխոտել էր պարտէզի ամեն բանը իշաբար:

Որևէ լեզուի մէջ տառերի սովորական շարքը կոչւում է այբուբեն: Հայոց լեզուի այբուբենն ունի 38 տառ.

Աս Բը Գգ Դդ Եե Զզ Էէ Ըը Թթ Ժժ Իի Լլ Խխ ԵԵ Կկ  
Հհ Զզ Ղղ Ճճ Մմ Յյ Նն ՇՇ Ոո Զզ Պպ Ջջ Ռր Սս Վվ Տտ  
Րր Ցց Իւ Փփ Քք Օօ Ֆֆ:

Այս տառերից զատ կայ նաեւ և նշանագիրը, որ կազմուած  
է եւ և տառերի միութիւնից:

Բացի տառերից կան և հետևեալ նշանները, որոնք առան-  
ձին գործունէութիւն ունին:

Վերջակէտ—։ միջակէտ—։ ստորակէտ—, բութ—՝ շեշտ—  
հարցական—՝ բացականչական նշան—՝ չակերտ բացւող—«  
չակերտ փակւող—» չակերտներ—« » գիծ—

Մեծ տառերով գրում են. վերնագրերը, գրւածքի, տողա-  
գլուխների ու ոտանաւորի առղերի սկզբի բառերը ինչպէս և  
վերջակէտից յետոյեկող առաջին բառերը:

Մէկ	1	Քսանեիննը	29	
Երկու	2	Երեսուն	30	
Երեք	3	Քառասուն	40	Առաջին
Չորս	4	Յիսուն	50	Երկրորդ
Հինգ	5	Վաթսուն	60	Երրորդ
Վեց	6	Եօթանասուն	70	Չորրորդ
Եօթ	7	Ութսուն	80	Հինգերորդ

Ութ	8	Իննըսուն	90	Վեցերորդ	VI
Իննը	9	Հարիւր	100	Եօթերորդ	VII
Չերո	0	Հազար	1000	Ութերորդ	VIII
Տաս	10	Տասհազար	10,000		
Տանսեմէկ	11	Հարիւրհազար	100000	Իններորդ	IX
Տասնեիննը	19	Միլիոն	1,000,000	Տասներորդ	X
Քսան	20				
Քսանսեմէկ	21			Մէկ, Երկու, Տասներկու	

Աթէնքը յոյների մայրաքաղաքն է։ Ծիծեռնակը իւր բոյնը  
շինում է բարձր տեղերում։ Անտարակոյս, այսօր մեզ մօտ կը  
հաւաքուեն ընկերները։ Այ մարդ, ինչու ես յոյսդ կորցրել։  
Մեր վառարանի ծխնելոյզի բերանը մեծ է։

Դու ჩը գիւղից ես, Արշակ։ Ցրտից արիւնս երակներիս մէջ  
սառել է։ Ազատութիւն ձեռք բերելու համար պիտի զեռ շատ  
արիւն թափւի։ Ընկեր, մի խնայիր քո կարմիր արիւնը մարդ-  
կութեան բախտաւոր ապագայի համար։

Սոցիալիզմի թագաւորութիւնը իւր հետ բերում է իսկա-  
կան ազատութիւն, եզրայրութիւն, հաւասարութիւն։

Գիւղացին իւր պարտէզից շահ շունեցաւ այն տարին. գի-  
տէք ինչնւ. բարի էշը չիմանալով գործի լաւն ու գէշը, թըռ-

չունների ետևից վազվելով անդադար, կոխոտել էր պարտէղի  
ամեն բանը իշաբար:

## ՆԻԹԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

### ԼՈՒՍՑԱՒ

Լուսացաւ  
Լուսացաւ  
Լուսն է բարին  
Ծիտն է ծառին,  
Հաւն է թառին:  
Աշխատաւոր, վեր կաց բանի.  
Ծոյլ տղայի քունը տանի:

### ՄԵՂՐ ՈՒ ՀԱՄԻՉ

Մեղրի համը՝ մատիկ մատիկ  
Զամչի համը հատիկ հատիկ,  
Համը տեսան, համը տեսան  
Ամանի տակը տեսան:

### ՊԱՐՈՆ ԳԼԽԱՐԿԸ

— Ես էլ արդէն պարոն եմ, ասաւ Գարեգինը: Դրաւ Գաս.

պար պապիկի լայն գլխարկը ու գնաց դուրս:

Դէմը ելաւ Գասպար գապիկը եւ ասաց.— Պարոն գլխարկ,  
պարոն գլխարկ, էդ ուր ես տանում իմ պստիկին:

### ՆԱՊԱՍՏՎԿԻ ՔԱՅԻՆ

Մեր տան առաջ պարտէղ կայ,  
Պարտէղի մէջ մի ծառ կայ,  
Ծառի վրայ մի բուն կայ,  
Բընի մէջ մի ձու կայ,  
Ձըւի մէջը նապաստակ,  
Փախի թէ չէ քացի կը տայ:

Առած.—Աստւած ազատի նապաստակի քացուց:

### ՇՈՒՆԸ

Հաֆ—հաֆ,	հաֆ—հափ
Ահա այսպէս	
Հաչում եմ ես.	
Հափ—հափ,	հափ—հափ
Ու տունն այսպէս	
Պահում եմ ես:	
Թէ գայ մեզ մօտ	

Մի հին ծանօթ,	
Մօտն եմ վազում	
Պոչըս շարժում:	
Բայց թէ մի գող	
Զար կամեցող	
Ուզի թաքուն	
Մտնի մեր տուն	

Հաֆ—հաֆ, հաֆ—հաֆ,

Ահա այսպէս

Հաշում եմ ես,

1) Միայն տունն է պահում շունը:

2) Ուրիշ էլ ինչ օգուտ է տալիս շունը.

3) Ըունը ինչու են շղթայով կապում:

## ՌՈՒԲԵՆԻ ԱՌԱԻՕՏԸ

— Ուր են գուլպաներս, ովք է տարել շապիկս. ուր են դրել գոտիս:

Այսպէս էր ասում Ռուբէնը ամեն առաւօտ, անկողնուց ելնելուն պէս: Ոտարորիկ վազվզում էր դէս ու դէն, մինչև որ բոլոր կորուստը գտնէր:

Ոտնամանների մէկը սեղանի տակն էր, մէկէլք սնտուկի ետեւը, իսկ գուլպաները ովք գիտէ ուր:

Ուշ է. ընկերները վազուց դպրոցումն են, իսկ Ռուբէնը նոր է իր սանրը որոնում, որ մաղերը սանրի:

## ԱՂՋԻԿՆ ՈՒ ԿՈՒԺԸ

Մանուշ ժիր աղջիկ էր: Առաւօտը վաղ ահագին կուժն ու-

Հաֆ--հաֆ, հաֆ—հաֆ

Ու տունն այսպէս

Պահում եմ ես:

սեց ու գետակն իջաւ, որ ջուր բերի:

Կուժը լցրեց: Ուզեց շալտկի, ուժը չպատեց, տեղիցը շարժի:

Կժի մօտ կանգնել էր ու լաց էր լինում, Այն ժամանակ մի պառաւ կին մօտեցաւ ու ասաւ.

— Ոյ որդի, ինչու ես լաց լինում, կէսը դատարկի, ուժդ կը պատի:

## ՄԵՂՈՒ

Ահա ծագեց արեգակը,

Ահա ծաղկեց մանուշակը.

Մեղուն թողեց իւր փեթակը

Տըզտըզալով, ալզտըզալով:

Մեղուն թուաւ ծաղիկներին,

Մեղը բերաւ փոքրիկներին,

Կըճ ու խայթոցն էլ չարերին

Կըսկըծալով կըսկըծալով:

## ԼԱՄՊՆ ՈՒ ԱՐԵՒԼ

Փոքրիկ լամպը նոր էին վառել ու դրել լուսամուտի առ-

ջւ: Քիշ մտիկ արաւ, տեսաւ որ հեռում սարերի ետեւը ա-

ըել մայր է մտնում:

Նայեց, նայեց ու ասաւ.

— Քեռի, ոչինչ, վատ չես, սիրուն բան ես. բաւական կը-  
լուսաւորես, բայց ի հարկէ իմ քայլիս չես հասնի:

Քամին այս որ լսեց, ծիծաղը պրծաւ.

Փուհ, արաւ, ու լամպը հանգաւ.

## ԿԱՏՈՒ

Պատուն եկաւ փիսիկ-փիսիկ,  
Հազար նազով ինչպէս հարսիկ.  
Դունչը սրբեց թաթիկներով  
Մազը սանդրեց չանչիկներով:  
Կատու, կատու, էր ես տրտում  
Թէ մկներն են այսօր արթուն:

## ԱՆԵՐԵՍ ՃԱՆՃԻ

Տաճատը ճաշում էր:

Տը՝ զզ. մի ճանճ եկաւ, նստեց քթին:

Տաճատը թևով քշեց:

Տը՝ զզ. ճարպիկ ճանճը նորից եկաւ եւ նստեց ճակտին:

Տաճատը նորից քշեց:

Տը՝ զզ. աներես ճանճը թուաւ, թուաւ, իջաւ ուղիղ Տաճա-  
տի ափսէի ափին, կնճիթը երկարացրեց ու սկսաւ անուշ անել  
նրա ճաշը:

— Ք’ ըշ, աներես ճանճ, ճաշա չեմ տայ քեզ, ճչաց Տաճա-  
տը ու պատառաքաղը զայրացած այնպէս ամուր խփեց, որ  
ափսէն փշուր փշուր եղաւ;

## ԳԱՐՆԱՆ ԱՄԻՍՆԵՐ

Մարտը տալիս է ձնծաղիկ  
Ապրիլը կապոյտ մանուշակ  
Մայիսին բացւում է վարդը,  
Սոխակը երգում է անուշակ:

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշխատանք, աշխատել, աշխատաւոր, աշխատանոց.

Բան, բանել, բանւածք, բանւոր.

Գործ, գործել, գործւածք, գործաւոր, գործարան.

Ճէն, շինել, շինւածք, զինարար, շինարարութիւն.

Արհեստ, արհեստանոց, արհեստաւոր.

Կօշիկ, կարել, կօշիկ կարող, կօշկակար.

Հաց թխել, հաց թխող, հացթուխ.

Զուր կըել, ջուր կըող, ջրկիր.

Երկրագործ, հողագործ, գինեգործ, ատաղձագործ կաշեգործ, թիթեղագործ.

Բուրդ մանել, բրդեայ մանւածք, բրդի արդիւնագործու.

թիւն.

Բամբակ, բամբակեայ կտոր, բամբակի մշակութիւն, բամբակի արդիւնաբերութիւն:

Ծխել, ծխախոտ, ծխախոտի գործարան:

Ռուսաստանը սոցիալիստական ֆեդերատիւ Խորհրդային հանրապետութիւն է:

Ռուսաստանի խորհրդային պետութիւնը կառավարում է բանւորների և գիւղացիների խորհուրդներով:

Բանւորա -- գիւղացիական Խորհրդային պետութեան մէջ թագաւորող աշխատանքն է:

Ով չի աշխատում, նա չունի իրաւունք:

Ռուսաստանի բանւորա -- գիւղացիական Խորհրդային իշխանութեան ղեկավար կուսակցութիւնը կոչւում է կոմմունիստական կուսակցութիւն:

Կոմմունիստական կուսակցութիւնը նպատակ ունի վերջնականապէս խորտակել կապիտալիզմը և իրականացնել կոմմունիզմը.

Սոցիալիստական պետութեան մէջ չկան տարբեր գասակարգեր, չկան կապիտալիստներ, գործարանատէրեր, շահագործողներ: Գործարանը պատկանում է բանւորական պետութեան:

Ռուսական Խորհրդային հանրապետութիւնը ամուր է ու հաստատուն բանւորի և գիւղացու խոր գիտակցութեամբ:

Խորհրդային Ռուսաստանի առաջամարտիկ գունդը կարմիր բանիակն է, որ կոռւմ, կոփում է Համաշխարհային Սոցիալիզմի շէնքը:



Ես բանւոր եմ: Աշխատում եմ գործարանում: Գործարանի մէջ աշխատանքը եռում է: Այնտեղ է մեր լաւագոյն կեան.

քի հիմքը գրւում: Բոլոր բանւորներս սիրում ենք գործարանը, որպինեաև այնտեղ չկայ առաջւայ աղան, կապիտալիստ գործարանատէրը: Այժմ գործարանի տէրը մենք ենք, բանւորներս: Մենք ունենք մեր բանւորական խորհուրդը, որի մէջ բոլոր բանւորներս ձայն ունենք: Մեզ շահագործող չկայ այլև. գործարանը մերն է և մենք գործարանինը:

### ՅԱՂԹԱԿԱՆ ԽՈՐՀՄԱՆՑԻՆ ՌՈՒՍՍՏԱՆ

Ռուսական յեղափոխութիւնը սկիզբն է համաշխարհային սոցիալիստական յեղափոխութեան:

Ռուսական բանւորա-գիւղացիական յեղափոխութիւնը ըսկում է 1917 թուին նոյեմբեր ամսին, հին տօմարով հոկտեմբերի 25.ին. Հէնց այդ ժամանակ էլ հիմնում է Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Ֆետերատիւ պետութիւնը: Աշխարհի մէջ նա առաջին սոցիալիստական պետութիւնն է, որ չտեսնւած արագութեամբ զարգանում է:

1918 թուին աշնանը Խորհրդային Ռուսաստանը սահմանափակւում էր միմիայն Մոսկվայի շրջանով, քսան հազար վերստ երկաթուղագծով և վաթուուն միլիոն քնակչով: Մէկ տարի յետոյ 1919 թուին աշնանը Խորհրդային Ռուսաստանն արդէն մեծացել, ընդարձակւել էր. նրա մէջ մտնում էին

Վոլգայի նահանգները, Ուրալը, Ուկրայինան: Իսկ 1920 թուի աշնանը ռուսական խորհրդային հանրապետութիւնը արդէն մի վիթխարի պետութիւն է: Նա բռնում է ամբողջ Եւրոպական Ռուսաստանը, Սիբիրը, Պուրքեստանը, Կովկասը Բելոռուսիան, Կրիմը. նա արդէն ընդգրկում է ամբողջ Երկրագնդի մի տասներորդ մասը:

Այդ տարածական ընդարձակութեան հետ միասին Խորհրդային Ռուսաստանի բարոյական նշանակութիւնն ու արժէքն ևս այս երեք տարւայ ընթացքում խիստ մեծացել է: Սկզբում բոլորը ենթադրում էին, որ վաղը, միւս որը Խորհրդային իշխանութիւնը խորտակւելու վրայ է. բայց այսօր երեք տարւայ գերբնական լարումից և գերմարդկային ճիգերից յետոյ Խորհրդային իշխանութիւնը աւելի հաստատուն հիմքերի վրայ է, քան բուրժուական պետութիւններից շատերը: Այսօր կապիտալիստական աշխարհն այլևս չի արհամարհում Խորհրդային Ռուսաստանը, այսօր նա կամ ատում է, կուռմ է նրա գէմ, և կամ նրա ռարեկամութիւնը որոնում, նրա հետ խռաղաղ ապրելու ցանկութիւն առաջ բերում:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Խորհրդային Ռուսաստանը կապիտալիստական պետութիւնների աչքի փուշն է: Նրա դէմ զինուած են համարեա բոլոր երկիրների բուրժուական կազմակերպութիւնները: Բայց նրա ամենավտանգաւոր և զօրեղ թշնամին ներքին, ռուսական թշնամին է եղել, բուն ռուսական հակա-յեղափոխութիւնը: Եւրոպական բուրժուազիայից օժանդակութիւն և քաջալերութիւն ստանալսվ ռուսական հակա-յեղափոխութիւնը այս աւելի քան երեք տարի է զէնքը ձեռքին կուռւմ է Խորհրդային Ռուսաստանի դէմ: Կոլչակը, Խւդենիչը, Դենիկինը, Վրանգէլը—դրանք բոլորը իրանց բանակներով ռուսական հակայեղափոխականներ են եղել ու հին ռեժիմի կողմանակիցներ: Դրանց ցանկութիւնն է եղել խորտակել Խորհրդային Խշանութիւնը և վերականգնել կապիտալի տիրապետութիւնը, դրա հետ միասին վերականգնել բանւորի, գիւղացու շահագործումը, ստրկացումը:

Բայց Խորհրդային Ռուսաստանը միմիայն խօսքով և պրոպագանդայով չէ կռւում հակա-յեղափոխութեան դէմ: Նա ունի յեղափոխական բանուրներից և գիւղացիներից բաղկացած մի կարմիր Բանակ, որի նմանը իւր զինւորական կարգապահութեամբ և յեղափոխական թափովը շատ քիչ կայ համաշ-

խարհային պատմութեան մէջ: Կարմիր Բանակը անանուն հերոսների, անձնազոհ քաջնորի մի բանակ է, որի գերմարդկային ճիգերի արդիւնքով այսօր Խորհրդային Խշանութեան կարմիր Դրօշակը ծածանւում է Հիւսիսային Սառուցեալ Ովկեանոսից մինչև Կովկասեան բարձունքները և Ռւկրայինի հարթավայրերից մինչև Միքիրի ու Թուրքեստանի տափաստանները:

Կարմիր Բանակը—զա Խորհրդային Ռուսաստանի մուրճն է. այդ մուրճն է, որ կռում, կոփում է կոմմունիզմի հոյակապ շէնքը: Կարմիր Բանակը այն սուրն է, որ յաղթական կերպով իջնում է բոլոր հակա-յեղափոխական շարժումների, բոլոր բուրժուազիան արշաւանքների գլխին: Նա սոցիալիստական նոր ծագող պետութեան ձեռքին մի խարազան է, որ անխնայ ջախջախում է նրանց, ովքեր յանդգնում են զէնք բարձրացնել բանւորների և գիւղացիների պրոլետարական իշխանութեան դէմ, ինչ լոգունգի տակ էլ որ նրանք հանդէս գալու լինեն:



## ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Այժմ Խորհրդային Ռուսաստանի սահմաններում տիրում է աղքատութիւն, քաղց, սով, ցուրտ հիւանդութիւններ: Կեանքը անյարմար է ու անհաճոյ, մարդիկ վատ են ապրում ու տանջ-

ւում են: Եւ դա հասկանալի է:

Կապիտալիդմի դարաւոր տիրապետութիւնն ու իմպերիալիզմի երկարամտայ պատերազմը, այլև քաղաքացիական կոիւները քար ու քանդ արին Ռուսաստանը: Քայքայւեցաւ տնտեսութիւնը, կանգ առաւ երկրի արգիւնաբերական աշխատանքը, խանգարւեցան հաղորդակցութեան միջոցները, դադարեց ապրանքների տեղափոխութիւնը, դադարեց օտար ապրանքների ներմուծումը՝ ընդհատւեց մեր երկրի ձեռքբերումն ու մըշակումը. և այդ բոլորի հետևանքն այն եղաւ, որ այսօր մեր երկիրը սովի, ցրտի և խաւարի երկիր է դարձել:

Եւ ահա այդպիսի դժոխային պայմանների սէջ Ռուսաստանի բանւորն ու գիւղացին բարձրացրել են Սոցիալիզմի նուիրական դրօշակը: Այդ դրօշակի վրայ գրւած է ապատութիւն ամեն աեսակ կապանքներից, լոյս և արե: Ռուսական բանւորն ու գիւղացին իւր զինւած հակա-յեղափոխական հակառակորդին հիւսիսում և հարաւում, արևելքում և արևմուտքում ջարդելուց յետոյ այսօր նոր թափով սկսում է սոցիալիստական պետութեան ցանկալի շէնքը կառուցանել: Այդ շէնքը կը լինի լուսաւոր, պայծառ և յարմար: Սոցիալիստական պետութեան մէջ չի լինի ոչ սով, ոչ ցուրտ, ոչ տգէտ, ոչ անգրագէտ: Կեանքը կը լինի այնտեղ յարմար և հաճելի:

քի մէջ միակ թագաւորող սկզբունքը աշխատանքը կը լինի, հաւասար, նպատակայարմար և հաճելի աշխատանքը:

### ԽՊՐՀՅԴԻՑ ՌՈՒՍՍՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ռուսական Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդակին հանրապետութիւնը կառավարւու է բանւորների և գիւղացիների խորհուրդներով: Խորհրդային Հանրապետութեան գլխաւոր մարմինը բանւորների և գիւղացիների կենտրոնական Գործադիր կոմիտէն է, որ հաւաքւում է Մոսկվայի կրեմլում և որի նախագահը Կալենինն է:

Կատարողական-վարչական ամբողջ իշխանութիւնը կենտրոնանում է Ժողովրդական Կոմիտարների Խորհրդում, որին ախազահը Լենինն է: Զինւորական և ծովային բոլոր ուժերի կոմիտարը Տրոցկին է: Արտաքին յարաբերութիւնների կոմիտարը Զիչերինն է, իսկ Ժողովրդական լուսաւորութեան կոմիտարը Լունաչարսկին է,

Բացի այդ կենտրոնական մարմիններից Խորհրդային Իշխանութեան բոլոր մանր ու խոշոր կենտրոններում կան բանւորների, գիւղացիների և աշխատաւորների բազմաթիւ ընտրական մարմիններ, կոմիտէներ, յանձնաժողովներ, որոնք իրենց տեղական գործերում աշխատում են բոլորովին անկախ՝ ղեկավար-

ւելով ընդհանուր Ռուսական Խորհրդային Հանրապետութեան  
Սահմանադրութեամբ:

Այդ սահմանադրութեամբ Խորհրդային Հանրապետութեան  
մէջ Թագաւորողը աշխատանքն է, երկրի տէրը աշխատաւորն է.  
Իւրաքանչիւր աշխատունակ քաղաքացի պարտականութիւն ու-  
նի աշխատելու, ոչ մի աշխատաւոր քաղաքացի աշխատանքից  
ազատելու աբանութիւն չունի:



### ՃՌՆՅԹՈՒԹԻՒՆ

Օյս փոքրիկ գրքոյկը, որ թէ այբբենարան է և թէ առաջին լի-  
թերցարան, որը կազմւած է թէ փոքրահասակ և թէ հասակաւոր ան-  
գրագէտների հառար—ծնունդ է ծայրայեղ կարիքին ամենաարագ և  
շտապողական կերպով գոնէ մասամբ բաւարարութիւն տալու ցանկու-  
թեան։ Ներկայ մոմենտը և այն միջավայրը, որի մէջ առաջ է գալիս  
այս գրքոյկը—միանգամայն անհամապատասխան են հրատարակչա-  
կան գործին,

Կրամնողարում բաւականաչափ հայերէն տառեր չկան, չկան յար-  
մարութիւններ ձեռագիր մտցնելու դասագրքի մէջ, հնարաւոր չէ մեծ  
շափով օգտևել պատկերների գործադրութիւնից։ Տպագրական պայ-  
մաններն համարիա միահամուռ կերպով մեկ արգելում էին այս գիր-  
քը հանդէս բերել. բայց յամենան զէպս մենք վճռեցինք հրատարակել  
այն, որովհետեւ անգրագիտութեան թանձր ծածկոցը արագօրէն վերա-  
ցնելու գործում, յոյս ունինք, որ այս գիրքն ևս կարող է մի փոքր  
օգնել։

Ներկայ այբբենարանը մի նպատակ ունի միայն. գրագիտութիւն  
սովորեցնել գոքրերին և մեծերին. մեթոդն ու ուսուցման եղա-  
նակները թողնում ենք ուսուցչին։ Ընթերցանութեան նիւթերը քիչ  
են և յարմարեցրած պայմաններին։ Ռուսուցիչը այս գրքի ամեն մի  
տողից կը զգայ, որ սրա թէ կազմութիւնը և թէ տպագրութիւնը վե-  
րին աստիճանի արագ և շտապողական կերպով է կատարւած։ Եւ զա-  
հասկանալի է։ Եթէ կեանքը մէջտեղ է քաշել հայ աշխատաւոր մաս-  
սաների միջից անգրագիտութիւնն ու անթափանց խաւարը արագօրէն  
վերացնելու մրցական հրամանք, լաւն ու լաւագոյն ընտրելու կա-  
րեք չի զգացւում այլն, մանաւանդ որ արդ ընտրութեան հարա-  
ւորութիւնն իսկ չկայ կեանքի մէջ։



ԱՐՁՈՒ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՎՈՒՄ

արմանակ և աւտովորություն Ան ու այս պահին առ ան-  
դա բարեկան ան և խուսափելու գի և հայութ առ այս պահին ան-  
դա առ անձնա ազգայի բնույթը կողման առ անձնա ազգայի բնույթը ցը-  
պահանա մասնաւու անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան

ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան

ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան  
ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան անուն ան

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Са

2013

3786

«Ազգային գրադարան»



NL0062017

